«ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

«Արմենիա» Միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ն փնտրում է համապատասխան որակավորում ունեցող ընկերությունների՝ օդանավակայանի մեկնման սրահում սրճարաններ շահագործելու նպատակով:

Մասնակցության համապատասխանության նվազագույն չափորոշիչներ. մրցույթին կարող են մասնակցել շուկայում հայտնի բրենդների սրճարանների/ռեստորանների շահագործման ոլորտում համապատասխան փորձ ունեցող և սննդի մատուցման բարձրորակ ծառայություններ մատուցող իրավաբանական անձինք՝

Միջազգային բրենդներ՝ 1 տարվա փորձ Հայաստանում
Հայաստանում գործունեություն չծավալող բրենդներ՝ առնվազն 20 սրճարանների/սննդի կետերի շահագործում տարբեր երկրներում, բանկային երաշխիք
Տեղական բրենդներ ՝ 3 տարվա փորձ Հայաստանում

Հայտերը և մասնակցի վերաբերյալ նախնական տեղեկատվությունը (ընկերության և բրենդի անվանում, համապատասխան փորձ) անհրաժեշտ է մինչև 2023թ. դեկտեմբերի 8-ը ներկայացնել հետևյալ էլ. փոստին՝ ngrigoryan@aia-zvartnots.aero:

«Արմենիա» Միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ն մինչև 2023թ. դեկտեմբերի 13-ը կապ կհաստատի նախապես որակավորված մասնակիցների հետ՝ տրամադրելու կոմերցիոն պայմանների և պահանջների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը: Մրցույթին հաղթած մասնակիցները կհայտարարվեն 2024թ. հունվարի 9-ին:

Ընդհանուր պայմաններ

Մեկնման սրահի հանրային գոտու ձախ կողմում տեղակայված սրճարանի շահագործում (նախագիծը կցված է)
Ընդհանուր մակերես՝ 473մ^2
Պայմանագրի ժամկետ՝ 5 տարի (փաստացի մեկնարկման ամսաթիվ՝ 2024թ. ապրիլի 1)
Սննդի մատակարարման ծառայություն՝ սրճարան (սուրճ, խմիչքներ, թեթև ուտեստներ)



Մեկնման սրահի հանրային գոտու աջ կողմում տեղակայված սրճարանի շահագործում (նախագիծը կցված է)
Ընդհանուր մակերես՝ 415մ^2
Պայմանագրի ժամկետ՝ 5 տարի (փաստացի մեկնարկման ամսաթիվ՝ 2024թ. ապրիլի 1)
Սննդի մատակարարման ծառայություն՝ սրճարան (սուրճ, խմիչքներ, թեթև ուտեստներ)



Մեկնման սրահի հանրային գոտու մեջտեղի հատվածում տեղակայված սրճարանի շահագործում (նախագիծը կցված է)
Ընդհանուր մակերես՝ 82մ^2
Պայմանագրի ժամկետ՝ 5 տարի (փաստացի մեկնարկման ամսաթիվ՝ 2024թ. ապրիլի 1)
Սննդի մատակարարման ծառայություն՝ սրճարան (սուրճ, խմիչքներ, պատրաստի թարմ ուտեստներ (պատրաստում չպահանջող, միայն տաքացվող):